Netherlands Institute for Multiparty Democracy

oxYGen

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մասնակցության հայտ

Տևողությունը՝ 3 ամիս

Մեկնարկի ամսաթիվը՝ հունվարի 1, 2024թ

Մասնակիցների թիվը՝ 25

Անցկացման վայրը՝ Երևան

Ծրագրի նկարագիր

Ժողովրդավարության հայկական բազմակուսակցական ակադեմիան (AMDA) ստեղծվել է ՕքսԵՋեն հիմնադրամի և Նիդեռլանդների բազմակուսակցական ժողովրդավարության ինստիտուտի համագործակցությամբ:

Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիան միտված է տարբեր հասարակական և քաղաքական փորձառություն ունեցող անհատներին ապահով տարածք տրամադրելուն, վերջիններիս երկխոսության և տարբեր խնդիրների մասին ունեցած ընդհանուր գաղափարների փոխանակման խթանմանը:

Ծրագրի նպատակն է ձևավորել քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների նոր սերունդ՝ զինված անհրաժեշտ գիտելիքով ու հմտություններով, որոնք ունեն արդյունավետ առաջնորդ դառնալու և Հայաստանում ժողովրդավարության ու քաղաքացիական ներգրավման ջատագով լինելու մոտեցումներ՝ նպաստելու ժողովրդավարության, մասնակցայնության և առաջնորդության մշակույթի ձևավորմանը:

Խնդիրները

- Նպաստել տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ երկխոսության ձևավորմանը, ձևավորել վստահություն և համագործակցություն՝ Հայաստանի տարբեր փորձառությամբ և քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների միջև՝ ուսուցանելու և ուղղորդելու, բանավեճերի, քաղաքական և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:
- Մասնակիցներին ուսումնական հագեցած ծրագրով փոխանցել ժողովրդավարության, քաղաքական համակարգերի, առաջնորդության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ՝ իրենց համայնքներում և ազգային մակարդակում արդյունավետ առաջնորդներ և ժողովրդավարության ու քաղաքացիական ներգրավման ջատագովներ դառնալու համար:

- Զևավորել տարբեր փորձառությամբ և քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների ուժեղ ցանց՝ հիմնված վստահության և համագործակցության վրա՝ Հայաստանում երիտասարդների քաղաքական մասնակցության և առաջնորդության կայունության համար:

Ի՞նչ է ակնկալվում մասնակիցներից

- Մասնակցություն ծրագրի երկօրյա թվով 6 դասընթացներին, որոնք կանցկացվեն 3 ամիսների ընթացքում՝ շաբաթ և կիրակի օրերին (երկու շաբաթը մեկ պարբերականությամբ): Ծրագիրը կազմված է ժողովրդավարության, քաղաքական համակարգերի և քաղաքականություն մշակելու թեմաները խորությամբ ուսումնասիրող դասընթացների մի քանի շրջափուլից:
- Ներգրավվածություն առնվազն երեք ոչ ֆորմալ բանավեճերին, որոնց կմասնակցեն քաղաքական գործիչներ և քաղաքականություն մշակողներ: Սա հնարավորություն կտա մասնակիցներին գործնականում կիրառելու դասընթացների ընթացքում ձեռք բերված գիտելիքն ու հմտությունները:
- Լավագույն առաջնորդության հատկանիշներ ցուցաբերած մասնակիցների մասնակցություն տարածաշրջանային փորձի փոխանակման Վրաստանի ուսանողների հետ :
- Անդամակցություն շրջանավարտների ցանցին՝ շարունակելու մասնակիցների հետագա ներգրավումը և պահպանելու քաղաքական մասնակցության նրանց հետաքրքրվածությունն ու հանձնառությունը:
- Ակտիվ ներգրավվածություն AMDA հարթակի գործունեությանը, որտեղ ցանցի անդամները հնարավորություն կունենան տեղեկատվություն ստանալու և փոխանցելու:

Ովքե՞ր կարող են դիմել

Տարբեր հասարակական և քաղաքական փորձառություն ունեցող 20-35 տարեկան անհատներ (35-40 տարեկան երկու մասնակից),

- ովքեր ներկայացնում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ,
- անդամակցում են քաղաքական կուսակցությունների,
- քաղաքական նկրտումներ ունեցող անկախ անհատներ են:

Ծրագիրը խրախուսում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների, էթնիկ փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի մասնակցությունը՝ ապահովելու բազմազանություն և ներառականություն:

Մասնակիցները կընտրվեն Հայաստանի տարբեր մարզերից: Հավասարակշռված ներկայացուցչություն ունենալու համար խրախուսվում է մարզաբնակ երիտասարդների մասնակցությունը:

Ընտրված մասնակիցները պետք է պարտավորվեն մասնակցել հանգստյան օրերին նախատեսվող բոլոր դասընթացներին և միջոցառումներին ծրագրի 3 ամիսների ընթացքում: Այս պարտավորությունն ապահովում է ուսուցման լիարժեք արդյունավետությունը և խթանում մասնակիցների պատասխանատվության և նվիրվածության բարձրացմանը:

Ի՞նչ են ստանում ծրագրի մասնակիցները

- ժողովրդավարության, քաղաքական համակարգերի, առաջնորդության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ՝ իրենց համայնքներում և ազգային մակարդակում արդյունավետ առաջնորդներ և ժողովրդավարության ու քաղաքացիական ներգրավման ջատագովներ դառնալու համար,
- կմիանան տարբեր փորձառությամբ և քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների ուժեղ ցանցին՝ հիմնված վստահության և համագործակցության վրա՝ Հայաստանում երիտասարդների քաղաքական մասնակցության և առաջնորդության կայունության համար,
- կստանան Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի ավարտական վկայական:

Commented [AS1]: Կլինի չէ?Ճ

Ինչպե՞ս դիմել

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել դիմում-հայտը հետևյալ *հղումով*:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի հոկտեմբերի 15-ը, ժամը 23:00-ն:

Հայտերի գնահատում.

Դիմում-հայտերի գնահատումը տեղի կունենա մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը :

Կդիտարկվեն միայն ընտրության չափանիշներին համապատասխանող դիմորդների դիմումները:

Մենք կապ կհաստատենք բոլոր ընտրված դիմորդների հետ և կհրավիրենք մասնակցելու հարցազրույց – հանդիպման՝ տեսազանգի միջոցով:

Netherlands Institute for Multiparty Democracy

oxygen

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել երիտասարդական համակարգող Անի Սարդարյանի հետ՝ զանգահարելով +37496007805 հեռախոսահամարին (երկուշաբթիից ուրբաթ, ժամը 09:30-ից մինչև 17:30-ն) կամ գրելով asardaryan@oxygenfund.am էլեկտրոնային հասցեին: